

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԻՐԻԱՅԻ 12 ՑԵՂԱԽՄԲԵՐԻ ԱՇԻՐԵԹԱՊԵՏԵՐԻՆ

Ապրիլի 2-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայոց ցեղասպանության 90-ամյակին նվիրված միջոցառումների ծրագրի շրջանակում Հայաստանում գտնվող Սիրիայի 12 ցեղախմբերի աշիրեթապետերին:

Նորին Սրբությունը, ողջունելով Սիրիայի 12 ցեղապետերի այցը համայն հայության նվիրական հոգևոր կենտրոն, ներկայացրեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելությունը և ներկայիս գործունեությունը: «Ձեր այցը Հայաստան երկիր էական և կարևոր է մեր երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը առավել զորացնելու համար: ...Մենք մեծապես գնահատում ենք այն սերը և այն հարգանքը, որ ձեր հայրերը դրսևորել են մեր ազգի զավակաց նկատմամբ՝ ցեղասպանությանը հաջորդող տարիներին, ցեղասպանությունից մազապուրծ հայորդիներին ապաստան տալով Սիրիայի օրհնյալ երկրում և ամենայն հնարավորություն ու աջակցություն ցուցաբերելով նրանց, որպեսզի կարողանան վերակազմակերպել իրենց կյանքը»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաև 2001 թ. Սիրիա՝ Դեր Զոր կատարած իր այցին: «Դեր Զորի հողությունը վկայությունն էր այն անկեղծ հարազատ ոգու, որ տեսանք Սիրիո բարեկամ արաբ ժողովրդի մեջ: Այնտեղ՝ Դեր Զորում նաև ցավն էր ամփոփված արաբ ժողովրդի»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ իր երախտագիտությունը փոխանցելով Սիրիայի նախագահին և ողջ արաբ ժողովրդին՝ հայ ժողովրդի հանդեպ տածած սիրո և հարգանքի համար:

Ի դեմս հյուրերի Ամենայն Հայոց Հայրապետին ողջունեց Ալ թայ ցեղախմբի աշիրեթապետ Մուհամմադ ալ Ֆարեսը՝ ուրախություն հայտնելով Հայաստան այցելության համար: «Մեր երկու ժողովուրդների հարաբերությունները միշտ ջերմ են եղել՝ խարսխված փոխհարգանքի սկզբունքի վրա: ...Հայ ժողովուրդը ենթարկվեց ծանր տառապանքների օսմանցիների կողմից, և մենք այսօր կիսում ենք այդ տառապանքը և ամեն տարի ապրիլի 24-ին հայերի հետ բաժանում ենք այդ դառը հիշատակը, ինչպես և հայերը կիսում են մեր ցավը՝ մայիսի 6-ին»,- նշեց իր խոսքում Մուհամմադ ալ Ֆարեսը:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը աղոթք բարձրացրեց առ Աստված՝ աշխարհում և մասնավորաբար Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատման համար՝ մաղթելով, որ մշտապես զորեղ մնա բարեկամությունը երկու ժողովուրդների: